ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

-- ---------- 2025 թվականի № -Ա

«ՔՈՆԹՈՒՐԳԼՈԲԱԼ ՀԻԴՐՈ ԿԱՍԿԱԴ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԻ 100 ՏՈԿՈՍԸ ԿԱԶՄՈՂ ԵՎ ՀԵՏԱԳԱՅՈՒՄ ԹՈՂԱՐԿՎԵԼԻՔ ԲԱԺՆԵՏՈՄՍԵՐԻ ԳՐԱՎԱԴՐՄԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) «ՔոնթուրԳլոբալ Հիդրո Կասկադ» փակ բաժնետիրական ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) 2025 թվականի հունիսի 20-ի №ԱԱ_068_2025 և հուլիսի 7-ի № ԱԱ_074_2025 գրություններով դիմել է Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով)՝ խնդրելով համաձայնություն տալ իր կանոնադրական կապիտալի 100 տոկոսը կազմող, «Որոտան Հոլդինգ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը պատկանող 2 725 500 100 հատ բաժնետոմսերը, ինչպես նաև Ընկերության կողմից հետագայում թողարկվելիք բաժնետոմսերը, որպես հաջորդող գրավ, «Արդշինբանկ» փակ բաժնետիրական ընկերությունում գրավադրման գործարքի (այսուհետ՝ Գործարք) կնքմանը,

բ) Հանձնաժողովը, ղեկավարվելով «Էներգետիկայի մասին» օրենքի 27-րդ հոդվածի 3-րդ մասով, 2025 թվականի հուլիսի 8-ի №ՄՄ/34.1-Մ2-2/3287-2025 գրությամբ դիմել է Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմ՝ Գործարքի վերաբերյալ ազգային անվտանգությանը կամ պետական շահերին վնասելու տեսանկյունից կառավարության դիրքորոշումը ստանալու նպատակով,

գ) Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմի ղեկավարի 2025 թվականի օգոստոսի 6-ի №02/12.4/25726-2025 գրությամբ Հանձնաժողով ներկայացված Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության, էկոնոմիկայի նախարարության, ֆինանսների նախարարության, Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության, Հայաստանի Հանրապետության անվտանգության խորհրդի քարտուղարի, ինչպես նաև

Կենտրոնական բանկի դիրքորոշումների համաձայն՝ Գործարքի առնչությամբ ազգային անվտանգության կամ պետական շահերին վնասելու մասով առարկություններ առկա չեն,

դ) ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ բացակայում են հայտ ներկայացնելու պահին գործող խմբագրությամբ «Էներգետիկայի մասին» օրենքի 27-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված՝ գործարքի համաձայնեցման մերժման հիմքերը, և

հիմք ընդունելով հայտ ներկայացնելու պահին գործող խմբագրությամբ «Էներգետիկայի մասին» օրենքի 27-րդ հոդվածը, «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասը, Հանձնաժողովի 2019 թվականի փետրվարի 27-ի №39-Ն որոշմամբ հաստատված կարգը, Հանձնաժողովը **որոշում է.**

1. Համաձայնություն տալ Ընկերության կանոնադրական կապիտալի 100 տոկոսը կազմող, «Որոտան Հոլդինգ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը պատկանող 2 725 500 100 հատ բաժնետոմսերը, ինչպես նաև Ընկերության կողմից հետագայում թողարկվելիք բաժնետոմսերը, որպես հաջորդող գրավ, «Արդշինբանկ» փակ բաժնետիրական ընկերությունում գրավադրման գործարքի կնքմանը:
2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված գործարքը կարող է կնքվել որոշումն ուժի մեջ մտնելու պահից վեցամսյա ժամկետում:
3. Ընկերությանը՝ ընդունել ի գիտություն, որ սույն որոշման 1-ին կետում նշված գործարքի կնքումից հետո անհրաժեշտ է երկշաբաթյա ժամկետում Հանձնաժողով ներկայացնել համապատասխան պայմանագրի պատճենը:
4. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում կարող է բողոքարկվել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան, և դրա բողոքարկումը չի կասեցնում որոշման գործողությունը կամ կատարումը:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Մ. ՄԵՍՐՈՊՅԱՆ**

ք. Երևան
-- օգոստոսի 2025թ.